այն մասամբ իմիք մեր երկիր մայրենի յաշխարհին Հայաստանի, որ այժմ գտանի ընդ բարեխնամ կառավարութեան ձերումդ գերազանցութեան»։ Ինչպես հայտնի է, Գեորգի XII-ը ժամանակավոր օգտագործման պայմանով (մինչև Շահամիրյանի ժառանգների գալը) իր 1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակով Լոռին տրամադրել էր մելիք Ջիմշիդին, որն էլ այն հետագայում վաճառում է ցարական կառավարությանը։ Գործարքն ի կատար էր ածվել, քանզի ֆինանսների մինիստրը դեռևս 1805 թ. մայիսի 22-ի գրությամբ հիմնավորել էր այն հետևյալ ձևով. «так как ни сын, ни внук Шамир-аги... со времени присоединения Грузии... до ныне не являлись и присяги на подданство не учинили, да и в живых-ли они находятся— никакого отзыва от них нет... [то] на продаваемую меликом Джимшидом грузинскому горному начальству землю купчую крепость совершить»[2].

Պ. Ա. ՁՈՐԱՆՅԱՆ

№ 1

Շահամիր Շահամիրյանի նամակը Մանուչար Թումանյանին

Պայծառագոյն տեառն Մանուչար Գորչասպի Թումանեան

ի Թիֆլիզ։

Բազմիցս եղև մերոց զանազան թուաւ գրեցեալքն առ ձեզ յատկապես ձերոց առ մեզ Կարապետ վաճառականովն գրածին պատասխանքն, որ հաւատամ, զի յառաջ քան զայսօր մերոց գրածանոց առաջինն ժամանել լինի առ ի սպաս բարեկամիդ իմոյ և այժմ խրախճանութեամբ ծրարեցի ի սմա ուսիդն ի վեր յիշեցեալ Կարապետ Գասպարեանին[1], որում ցուցանէ, զի 20 թան զանազան ճոթանք հանձնել ամ Կարապետ Գասպարեանին, որոց վերա գրեցեալ համբաւաւոր անունն քոյ, որ մերոց ծախուքն Թիֆլիզ հանձնէ քեզ։ Ցանկամ, զի սիրով ընկալցիս, համարելով իբրև զնշան սիրոյ բարեկամի քոյ և զպակասութիւնն մեզ ներեսցես։

Նոր մին այլ լուր չունիմ քեզ տալէ, թէ ոչ կալով սպասիմ ի ձէնջ ընթեռնում մերոց բազմիցս գրեցելոց պատասխանքն և ցանկամ, զի դուք էն աջողութիւնն լինէք գտէլ, որ իմ ցանկացած բանքն բարեպէս կատար լինէք հասուցել և այլն։

Յաւել քան զայս ցանկամ քեզ երկար կեանս, և աջողութիւն ընդ ամենայն գործս բարիս, եթէ իմ լէվ բարեկամ Սուլխան Դիվանն Ռուստինցն[2] եկէլ լինի, յինէն ողջունես նմա և ասես, ցանկամ, զի եթէ ունիցի լուր ինչ վասն բարութեան աշխարհին ձերոյ, որ կարէ ուրախ առնել սիրտն մեր՝ շնորհ առ մեզ ունելով իւր առողջութեան լրիւն գրեսցէ մեզ, շնորհակալ կը լինեմ։

Մադրասումն յունվարի ամսոյ... 19 Հրամանոց խոնարհս
հաւատի բարեկամ
Յամի տեառն փրկչին մերոյ 1793 Շամիր աղայ

Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), արխիվ Կյուրեղ Սրապյանի, թղթ. 81ա, փաստ. 7։

№ 2

Շահամիր Շահամիրյանի նամակը Մանուչար Թումանյանին

Պայծառագոյն տեառն Մանուչար Գուրչասպի Թումանեան

ի Թիֆլիզ

Ձերոց երիս պատուելեացդ սեպտեմբերի ամսի 24 յամի տեառն 1794 թուէն առ մեզ գրեցելոյ պատասխանն ի յանուն ձերոց երիս պատուելեաց գրել ամ, այլ ինձ ախորժ է գրել քեզ՝ յատուկ անձնաւորութեանն քոյ, նախ հաս-

[2] Кавказская старина, год 1, № 2, Тифлис, 1872, с. 37.